ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.09.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/252

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.08.2021թ. թիվ 26/26-1/13783-2021 գրությամբ «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 20.08.2021թ. թիվ 01/61-19846 գրության հիման վրա, 30.08.2021թ. թիվ 26/26-1/13783-2021 գրությամբ նախաձեռնել է «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/252 ընթացակարգի շրջանակներում 02.09.2021թ. ժամը 09:15-ին և 06.09.2021թ. 09:19-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.08.2021թ. թիվ 01/61-19846 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ի միջև 07.05.2021 թվականին կնքված N «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/36» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվել է սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված ծավալաթերթ-նախահաշվով, ծավալներով և ժամկետներում իրականացնել Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի 11-րդ փողոցի հ. 19 շենքի ամրացման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

Սահմանված կարգի համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից Ընկերությանը բանավոր ինչպես նաև գրավոր 14.06.2021թ. հ16/13881-ել և 24.06.2021թ. հ.16/14877 գրություններով դիմել է Ընկերությանը իրականացնելու տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքները, սակայն համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել:

Պայմանագրի 3.1.4 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի՝ միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պահանջված վնասները եթե.

ա) կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում՝ այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացույցային գրաֆիկը)՝ պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագրային ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է համաձայն հավելված 2-ի»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն վկայակոչել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածը, 466-րդ հոդվածի 3-րդ մասը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա) պարբերությունով, առաջարկել է Ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/252 ընթացակարգի շրջանակներում 02.09.2021թ. ժամը 09:15-ին և 06.09.2021թ. ժամը 09:19-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/252 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/252 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի և «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ի միջև 07.05.2021թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/36» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի 11-րդ փողոցի հ. 19 շենքի ամրացման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի նույն կետի 1.3-րդ ենթակետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է Համաձայն Հավելված 2-ի:

3. Պայմանագրին կից հավելված N 2-ով՝ օրացուցային գրաֆիկով, Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի 11-րդ փողոցի հ. 19 շենքի ամրացման աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել 90 օրացուցային օր:

4.Պատվիրատուն «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ին ուղղված 17.08.2021թ. թիվ 01/61-19309 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ի միջև 07.05.2021 թվականին կնքվել է N «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/36» ծածկագրով գնման պայմանագիր, որի շրջանակներում Ընկերությունը ներկայացրել է պայմանագրի և որակավորման ապահովումներ՝ միակողմանի հաստատված տուժանքի մասին համաձայնության ձևով»:

Սահմանված կարգի համաձայն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության կողմից Ընկերությանը բանավոր ինչպես նաև գրավոր 14.06.2021թ. հ16/13881-ել և 24.06.2021թ. հ.16/14877 գրություններով դիմել է Ընկերությանը իրականացնելու տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքները, սակայն համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել:

Պայմանագրի 3.1.4 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի՝ միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պահանջված վնասները եթե.

ա) կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում՝ այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացույցային գրաֆիկը)՝ պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագրային ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է համաձայն հավելված 2-ի»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի

համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված, և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 18.08.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.08.2021թ. թիվ 26/26-1/13783-2021 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 20.08.2021թ. թիվ 01/61-19846 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, Երևանի քաղաքապետարանի և «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ի միջև 07.05.2021թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/36» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի 11-րդ փողոցի հ. 19 շենքի ամրացման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի նույն կետի 1.3-րդ ենթակետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է Համաձայն Հավելված 2-ի:

Պայմանագրին կից հավելված N 2-ով՝ օրացուցային գրաֆիկով, Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի 11-րդ փողոցի հ. 19 շենքի ամրացման աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել 90 օրացուցային օր:

Պատվիրատուն «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ին ուղղված 17.08.2021թ. թիվ 01/61-19309 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ի միջև 07.05.2021 թվականին կնքվել է N «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/36» ծածկագրով գնման պայմանագիր, որի շրջանակներում Ընկերությունը ներկայացրել է պայմանագրի և որակավորման ապահովումներ՝ միակողմանի հաստատված տուժանքի մասին համաձայնության ձևով»:

Սահմանված կարգի համաձայն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության կողմից Ընկերությանը բանավոր ինչպես նաև գրավոր 14.06.2021թ. հ16/13881-ել և 24.06.2021թ. հ.16/14877 գրություններով դիմել է Ընկերությանը իրականացնելու տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքները, սակայն համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել:

Պայմանագրի 3.1.4 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի՝ միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պահանջված վնասները եթե.

ա) կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում՝ այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացույցային գրաֆիկը)՝ պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագրային ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է համաձայն հավելված 2-ի»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը

նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված, և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 18.08.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 3.1.4 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի՝ միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պահանջված վնասները եթե.

ա) կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում՝ այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացույցային գրաֆիկը),

...:

Պայմանագրի 6.6-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով՝ վերը նշված փաստերով պայմանավորված, արձանագրում եմ, որ «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ն խախտել է իր և Երևանի քաղաքապետարանի միջև 07.05.2021թ. կնքված թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/36» պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցերի ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.08.2021թ. թիվ 26/26-1/13783-2021 գրությամբ «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**